Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

	Նոտարական գործողության տեսակը	դրույքաչափը՝ ՀՀ դրամ
1.	անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ՝ նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար՝	
ա)	**գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձերի կամ պետական կամ համայնքային սեփականության հողամասերի**	500
բ)	**այլ անշարժ գույքի**	5 000
2.	անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման, ռենտայի և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝	
ա)	**գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձ հողամասերի, պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի, ինչպես նաև հանրակացարանների համար**	500
բ)	**բնակարանների համար**	1 000
գ)	**այլ անշարժ գույքի համար**	5 000
3.	ավտոտրանսպորտային միջոցների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը վավերացնելու համար՝	
ա)	**առաջին հերթի ժառանգներին**	2 000
բ)	**երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին**	3 000

գ)	**այլ անձանց**	5 000
4.	գրավի (բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի) պայմանագրերի վավերացման համար	2 000
5.	անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար	1 000
6.	գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի պայմանագրերի վավերացման համար	500
7.	գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար	500
8.	այլ պայմանագրերի վավերացման համար	2 000
8.1.	էլեկտրոնային պայմանագրերի էլեկտրոնային եղանակով վավերացման համար	500
9.	կտակների վավերացման համար	2 000
10.	ժառանգության իրավունքի վկայագրեր տալու և նվիրատվության պայմանագրերի վավերացման համար՝	
ա)	**առաջին հերթի ժառանգներին**	2 000

բ)	**երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին**	3 000
գ)	**այլ անձանց**	5 000
10.1.	կտակակատարի լիազորությունների հավաստման վկայագրեր տալու համար	1 000
11.	անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար	3 000
12.	շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար	2 000
13.	գույքային իրավունքների կառավարման լիազորագրերի վավերացման համար	1 000
14.	ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար՝	
ա)	**առաջին հերթի ժառանգներին**	1 000
բ)	**երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին**	5 000
գ)	**այլ անձանց**	20 000
15.	ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար՝	
ա)	**առաջին հերթի ժառանգներին**	1 000
բ)	**այլ անձանց**	30 000
16.	այլ լիազորագրերի վավերացման համար	500

17.	ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար	2 000
18.	փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար	500
19.	փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար	300
20.	փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար	500
21.	առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնության վավերացման համար	5 000
21.1.	կատարողական մակագրության թերթ տալու համար	5 000
21.2.	իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար՝	
ա)	**անձանց ազգակցական հարաբերությունները հաստատելու համար**	2 000
բ)	**անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատելու համար**	2 000
գ)	**ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը հաստատելու համար**	2 000
դ)	**ժառանգությունն ընդունելու և ժառանգության բացման վայրի փաստի հաստատման համար**	2 000

ե)	**իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը հաստատելու համար**	2 000
զ)	**սեփականության իրավունքով գույքի տիրապետումը հաստատելու համար**	2 000
21.3.	գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմիններին գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ նախնական նշում կատարելու ծանուցման համար	1 000
21.4.	քաղաքացիական նախաձեռնության շրջանակներում նոտարական գրասենյակում տեղում ստորագրություն տալու դեպքում քաղաքացու ստորագրության իսկության վավերացման համար	յուրաքանչյուր ստորագրության համար՝ 100
22.	նոտարական այլ գործողությունների համար	2 000